Գործ թիվ ԵԴ/16836/02/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ
ԳՈՐԾԸ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.10.2018թ. ք. Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ.Վարդազարյանս, ուսումնասիրելով վարույթումս գտնվող թիվ ԵԴ/16836/02/18 քաղաքացիական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 23.08.2018թ. որոշմամբ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի հայցադիմումն ընդդեմ Նարինե Գևորգի Ախպարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ընդունվել է վարույթ, որի վերաբերյալ որոշումը և համապատասխան փաստաթղթերն ուղարկվել են սույն գործով կողմերին:

Դատարանն արձանագրում է, որ ներկայացվել է նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջ:

Պատասխանողին ուղարկված դատավարական փաստաթղթերը վերադարձվել են դատարան՝ <<չպահանջված>> փոստային մակագրությամբ:

Դատարանը ձեռնարկել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ, 99-րդ հոդվածով սահմանված բոլոր միջոցները անհրաժեշտ դատավարական փաստաթղթերը պատասխանողին հանձնելու ուղղությամբ, մասնավորապես դատարանի կողմից գրություն է ուղարկվել պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի վարչական շրջանի ղեկավարին և Հայաստանի Հանրապետության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակային ծանուցում է տեղադրվել առաջին ատյանի դատարանում դատավարական փաստաթղթերի դեպոնացված լինելու վերաբերյալ, որը տեղադրելուց հետո 15-րդ օրը դատավարական փաստաթղթերը համարվում են հանձնված (ստացված):

Դատարանը գտնում է, որ բացակայում է գործը պարզեցված վարույթի կարգով չքննելու հիմքերը, հետևաբար պետք է գործը քննել պարզեցված վարույթի կարգով և նշանակել դատական ակտի հրապարակման ժամանակ և վայր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 296-298-րդ և 361-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ըստ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի հայցի ընդդեմ Նարինե Գևորգի Ախպարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԴ/16836/02/18 քաղաքացիական գործը քննել պարզեցված վարույթի կարգով:
2. Դատական ակտը հրապարակել 2018թ. դեկտեմբերի 05-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ